



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 48/24-Շ « 23 » 06 2023 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետը և ռեկտորի թիվ 32/39-Լ հրամանով «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման ու անցկացման կարգի 18-րդ կետը՝

հրամայում եմ՝

1. «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի ներքոհիշյալ աշխատողներին պարգևատրել 300 000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը.

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների դոկտոր Հովիկ Հարությունի Փանոսյանին,

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի դոցենտ, քիմիական գիտությունների թեկնածու Լիանա Սերգեյի Գաբրիելյանին:

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել պրոռեկտորներին, գիտական քարտուղարին, ԵՊՀ կենսաբանության, քիմիայի ֆակուլտետներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ